ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հուլիսի 15-ին կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/1.2» պայմանագրում 2019 թվականի սեպտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով՝ մատակարարման ժամկետը սահմանելով մինչև 20.10.2019թ.:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.07.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/1.2 պայմանագրի

Ք. Երևան <<18>> սեպտեմբերի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Հովսեփյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 15.07.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/1.2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով՝ մատակարարման ժամկետը սահմանելով մինչև 20.10.2019թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Դրոյի 8, բն. 4
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Յունիբանկ» ԲԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 24105020675400
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 00889965
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն՝ elaam@bk.ru
	Հեռ. 091594545
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ